երկու անգամ տեղ է տալիս նրանց իր յիշատակութեանց մէջ։ Այդ երեք տերմիններից մեզ յայտնի է միայն երկաթագիրը, մինչ միւսների մասին ճշտիւ ոչինչ չգիտենք։ Սակայն մենք որ այս վերջին երեք տարուայ ընթացքում պարապում ենք հայ ձեռագրերից մանրանկար զարդագրերի ընդօրինակութեամբ, հաւանական ենք համարում, որ նշանագիր և գաւազանակերպ գիր կամ գաւազանագիր ասելով Ղազարն ու իր ժամանակիցներն հասկանալիս լինէին մեր ձեռագիր մատեաններում տիրող երկու ոճ զարդագրերի—1) կենդանագիր, որի ծագումը մենք տեսնում ենք չորս աւետարանների չորս նշանական կենդանիների՝ մարդու, առիւծի, եզան և արծուի՝ մէջ, 2) մանուածոյ տառեր, որոնց հիւսուածքը. մանաւանդ հնագոյններում, իսկապէս յիշեցնում է արքունի կամ եկեղեցական գաւազանների ձևերը։ Բայց այս մասին աւելի ընդարձակ ուրիշ տեղ։

Ղազարն, իրա ասելով, երկու տարբեր աղբիւրներից է կազմել իր Հաւաքարանը: Առաջինը որպէս թէ գրուած է եղել Գագիկի քարտուղար Թումայի ձեռով, մագաղաթի վրայ, երկաթագրով նշանագրով և գաւազանակերպ գրով»։ Երկրորդը՝ «գրեալ տիրացու Ներսէսէ». վերջինիս մասին պատմում է, որ գնացել է Երուսաղէմ ուխտի Յովակիմ պատրիարքի ժամանակ։ Յովակիմը Ներսէսին նուիրել է «արծաթէ բուրվառ մի արծաթէ ջահ մի քշոց մի»։ Աղթամարից վերջերս Մայր Աթոռ փոխադրուած իրերի մէջ կան Յովակիմի այս նուէրները, որից երևում է, որ Ներսէսի մասին պատմուածը անհիմն չէ. հետևապէս և երկրորդ աղբիւրի գրութեան ժամանակը պէտք կը լինի դնել Յովակիմի պատրիարքութեան շրջանում, այն է՝ 1775—1793 (հմ. Օրմանեան, Ազգապատում, էջ՝ 3176—7)։ Յիշուած աղբիւրներից ոչ մին ոչ միւսը մեր ձեռն հասած չլինելով, պարզ է, որ ներկայ Հաւաքարանիս արժէքն անհամեմատ մեծանում է։

Այժմ մի քանի ծանօթութիւն հրատարակութեան առթիւ.